




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ

Գիտական, Գրագիտական, Արուեստագիտական,
Էւ Մանկավարժական



1902 ՅՈՒՆԻԱՐ 20 — ԹԻՒ 10

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՆԱՆ

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY


OF THE UNIVERSITY OF CHICAGO
CHICAGO, ILL.



1900

CHICAGO, ILL.





ՀԱՆԳԻՍ
ՏՈՍՆՕՐԵԱՅ

هانراكيداق
مجموعه علوم

HANRAKIDAGUE
JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 10

20 ՅՈՒՆԻՍԻՍ 1902



ՊԵՐԼԻՆ, Մայրաքաղաք Դերման Կայսրութեան

ԱՇԽԱՂԱԳՐԱԿԱՆ

ՊԵՐԼԻՆ

Մայրաքաղաք Բրուսիոյ թագաւորութեան եւ 1871էն ի վեր Գերմանիոյ կայսրութեան: Ունի 1,678,000 բնակիչ: Հոս կը բնակին Կայսրը, նախարարները, Ռայխս-դաիլը եւ օտար Տէրութեանց դեսպանները: Շատերը ըսած են թէ այս քաղաքին ծաղկեալ վիճակ մը ունեցած ըլլալը քահանայքէ ու դիպուածէ յառաջ եկած է միայն, ուրիշներ՝ կը նկատեն այդ իբր արդիւնք Պրատէնպուրկի կայսրընտիրներու կամքին: Եթէ Բրուսիոյ վեհապետները՝ Պերլինը իբր մայրաքաղաք ընտրած են, այդ քաղաքը իր աշխարհագրական դիրքով ալ ազոր համար ձեւացած կրնայ նկատուիլ: Քաղաքը կը գտնուի Սրբէ գետին երկու ճիւղերուն մէջտեղը, պաշտպանուած բլուրներով՝ որոնց վրայ ժամանակով դղերակներ ու բերդեր հաստատուած էին: Էլպա եւ Օտէր գետերէն հաւասարապէս հեռի ըլլալով, հին ատեններ կը ծառայէր երկուքին մէջ հաղորդակցութեան կեդրոնավայր մը: Համպուրկի եւ Պրեսլաւի ճամբուն ճիշդ մէջտեղը, նոյնպէս ալ Լայբցիկէն Շթէթին գացող ուղիին վերայ կը կանգնի: Մեծն Նաբուլէոն օգտուած է այս յարաբերութիւններէն 1806ին:

Պերլին կը տարածուի աւազուտ, անբեր ու տափարակ դաշտի մը մէջ: Քաղաքը ինքնին հիանալի կամ նորակերտ բան մը չունի: Հոս փնտռելու չէ անցեալին վրայ խօսող շէնքեր, որոնք դարաշրջանի մը կամ արուեստի մը մարմնացումն են: Վէպէր գերման նշանաւոր գրագէտը կ'ըսէ. « Բրուսիոյ մայրաքաղաքը կը նմանի Եգիպտոսի բուրգերուն՝ անապատին մէջ »: Եւ քիչ մըն ալ իրաւունք ունի: Թէեւ Պերլին սքաչելի ծառուղիներ, զբօսավայրեր ունի, եւ թէեւ հին ու անշուք քաղաքներուն ու Պերլինի մէջ մեծ տարբերութիւն կայ, սակայն արդի փողոցներուն խիստ շատերը նեղ ու տխուր են, տունները իրարու փակած շատ բարձր են ու լեցուած բնակիչներով, որոնք առողջապահութեան վրայ գաղափար չունին:

Սրբէ, որ քաղաքին մէջէն կ'անցնի չի գեղեցկացնէր զայն. Գերմանացի հեղինակ

մը ըսած է « Սրբէ երբ Պերլին կը մտնէ Կարապի պէս մաքուր է. դուրս ելած ատեն խոզի կը նմանի » Այս գետին ջուրերը սեռ զարչելի են, մանաւանդ որ մէջը վազած գետակներն ալ իրմէ մաքուր չեն:

Այսու հանդերձ ամենամեծ ջանքեր կ'ըլլան քաղաքը բարեգարդելու համար: Այսօր Պերլին ահագին շէնքեր ունի, բայց ասոնք ո՛չ գրական դար մը, ո՛չ արուեստական ջրըջան մը կը ներկայացնեն: Յիշենք Բրուսիոյ թագաւորին պալատը, Մեծն Ֆրետերիքի պալատը (գործ մօխ քանդակագործին, 1851), արքայական դղեակը. Մեծ ընտրողին արձանը:

Պերլին ամէնէն աւելի գիտութեանց ու արուեստներու մայրաքաղաքն է: Պերլինի համալսարանը, 1822ին հաստատուած, որ մինչեւ այսօր « Հօհէնցօլէրնի տան պատին է », երկու հարիւրէ աւելի ուսուցիչ եւ 10 հազար ուսանող ունի: Ասկէ վատ ունի 30 երկրորդական ու տրիստագիտական վարժարան ու 150 նախնական վարժարան: Գեղարուեստից կաճառը եւ արքայական թանգարանը խիստ թանկագին նկարներ կը պահեն: Գիտական մարմինները օր օրի կը զարգանան ու կ'աւելնան: Պերլինի աշխարհագրական ընկերութիւնը, ամէնէն լաւ կազմակերպեալ կաճառներէն մին է: Արքայական թանգարանին մէջ կան մէկ միլիոն հատոր գիրք եւ քսան հազարի չափ ձեռագիր:



ԱՌՐԱՆԱԴԻ

ՊԶՏԻԿ ՏՂԱՆ

Քեզ աս կը սիրեմ, ո՛վ սուրբ Կիւսկի,
Ըսեմ, քե ինչո՛ւ.

Մրսէս կը վաճեն հոգես անհարկի,
Թեւովք երկնացու:

Շենեո՛ղ՝ քան զամեն օրեր շաքբուն՝
Կը շողաս վառ վառ.

Դրպրոցէն ազա՛ս՝ ուրախ ու ժպտո՛ւն՝
Կը վազեմ վեր վար,

Ընկերներս հագուած ներմակ , կապուսա՛կ ,
Գոյն գոյն պասմունան .
Կը տօնեն անհոգ , լոյս երկրնիկն սակ ,
Կեանքի խրախնան ,

Ժամ կ'երթամ տեսնել անմահ Պասարազ ,
Մօրկանս առնքեր ,
Աղօթե՛լ սրտանց , ցաւերն երկնառափ
Խրնայե՛ մեզ Տե՛ր ,

Սուրբ Պասարագին օրհնութիւններե՛ն՝
Գոն՝ կը դառնամ տուն .
Կը ճաշեմ ինչ որ առջիս կը բերեն՝
Խայսակն ու զուարթուն ,

Դաւո՛ս կ'ելլեմ ապա՝ ծրծել խունկն անգին
Ծաղկանց երկնանուէր .
Թրքո՛ւն՝ կը պարեն հոն քէկն ի քիկին՝
Խօլ գարնան հովեր :

Այն ի՛նչ խնդումով խաղեր կ'ընեմ հոն՝
Խաղե՛ր մանկական ,
Թռչունք կարծելով զիս վարդի կոկոն՝
Ինծի մօտ կուգան .

Կանաչ դաւո՛սին մէջ ցասեցելով այսպէս՝
Աւելոյժ , խայսագին ,
Կը հաւեմ այլուոր ծաղիկներ պէս պէս
Զօնել մայրիկին :

Շա՛ւս , Էա՛ս կը սիրեմ , քեզ , ո՛վ Կիրակի ,
Ըսի քե ինչո՞ւ ,
Մտե՛ս կը վանես հոգերս անհաւկի՝
Թեւո՛վդ երկնաչու :

ՄԿՐՏԻԶ Ա. ԹՈՒՐԵՒՆ

ՈՒՍՄԱՆ ՍԷՐ

Սիրելի՛ որդեակ .

Շատ ուրախ եմ , « իրելի՛ս » տեսնելով որ
ուսման ու դիտութեան օգտին վրայ ըսած-
ներուս համոզուելով՝ անոնց մէջ յառաջա-
նալու փոյթ ու ջանք ունիս : Բայց միւս
կողմանէ բնութիւնդ ճանչնալով՝ որ պղտիկ
դժուարութենէ մը կը վհատիս , ու երկայն

աշխատութենէ կը փախչիս , կը վախճամ
որ չըլլայ թէ քիչ մը վերջը եռանդդ մարի :
Գիտեմ որ քու սորված ուսմունքներուդ մէջ
ամէնէն դժուարինը թուարանութիւնն է , և
դու այդ ճիւղին մէջ շատ դժուարութիւն կը
կրես յառաջ երթալու , ուստի , մի՛ ճանճրա-
նար և մի՛ վհատիր , այլ համբերող եղիր ,
և աշխատութիւնդ կրկնապատկէ , ու քիչ
յետոյ պիտի տեսնես որ այն ամէնադժ-
ուարին կարծած խնդիրներդ հետզհետէ պի-
տի լուծուին : Ուստի պատշաճ կը սեպեմ
համակուրնէ քեզի յորչսրել որ աշխատասէր
ու համբերող ըլլաս : Ոսկին ու արծաթը
մինչեւ այսօր երկրին տակը ծածկուած պի-
տի մնար , թէ որ ընչասիրութիւնը մարդի-
կը չդրդէր , որ ամէն դժուարութիւններուն
յաղթելով՝ անհնարին ու երկարատեւ աշ-
խատութեամբ փորեն հանեն : Գիտութիւնն
ալ անսպառելի հանք մըն է , բայց գտնելու
և հանելու ու ձեռք բերելու համար՝ հաս-
տատամտութեամբ ու ջանքով աշխատելու
է : Ամէն բանի սկիզբը դժուարին ու ծանր
է , բայց երկարատեւ աշխատութիւնն ամէն
բան կը դիւրացնէ , ու հաստատամտութիւնը
միշտ յաջողութեամբ կը պսակուի : Պէտք է
որ դիտութեան և կրթութեան սէրն ի ըս-
կըզբան մեր եռանդը վառէ , որով և դժ-
ուարութիւններն արհամարենք . անկէջ վեր-
ջը նոյն խի մեզի հոգնեցնող դժուարու-
թիւններն մեր զբաղմունքն սիրելի կ'ընեն
մեզի . երթալով սէրերնիս կ'աւելնայ , որով
և այն ամենածանր զբաղմունքները մեզի
քաղցր կուգան : Երբ որ առջևդ դժուար
խնդիր մը և կամ դաս մը կ'ելլէ , պէտք չէ
որ շուտով մէկ կտրմ թողուս , այլ լուծելու
և ուսումնասիրելու ջանայ , փոյթդ աւելցուր
և վերջապէս պիտի սորվես : Այս առաջին
յաջողութիւնը քեզի զօրացնելով՝ աւելի
դիւրութեամբ յառաջ պիտի երթաս ուս-
մունքներուդ մէջ :

Գիտութիւնը և ուսմունքը սքանչելի կղզի
մըն է , որուն եզերքները դժուարամեղծ ու
ժայռերով լեցուն են , բայց երբ որ մարդ
մը մէջը կը մտնէ , չի կրնար կամ չուզեր
դուրս ելլել : Ահաւասիկ սոյն սքանչելի կղզի-
ւոյն առջևն ես , այժմ՝ պէտք է ջանաս որ
մերձենաս ու մէջը մտնես :



ԱՌՈՂՋԱՅԱՍ ՀԻՒԱՆՊԵ

Թէեւ ունեւորները փարթամ հարստութեան ու ճոխութեան տէր են, սակայն անոնք չատ բեռեր ու հիւանդութիւններ կը կրեն, որոնցմէ զերծ են ազատ մարդիկը: Որովհետեւ կան այնպիսի հիւանդութիւններ որոնք ոչ միայն բաց օդին մէջ կը գտնուին, ապա լեցուն պնակներու և դաւաթներու, և փափուկ ու մետաքսեայ ան-

կ'ուտէր ևւ դրացիներն ալ շատ անգամ կ'ըսէին թէ՝ «Արդեօք փութորի՞կ ելաւ. թէ ոչ մեր շատակերին բերնին աղմկալից շափափումն է:» Կէս օրէն վերջը կ'ուտէր ու կը խմէր մինչեւ իրիկուն սրտին նեղութենէն, երբեմն տաք՝ երբեմն պաղ կերակուր, առանց անօթութեան ևւ առանց ախորժափի, ևւ եթէ մէկը ներկայ գտնուէր այս տարօրինակ շատակերութեան, պիտի չի կրնար որոշել թէ՝ ե՞րբ ցերեկուան ճաշը կը



Առջի օրը այնքան կաւաւց կ'երթար որ... Եր. 149

կողիններու մէջ կը վխտան, ինչպէս բոլոր հարուստ Ամստերտամիք կրնան վկայել այս բանս:

Բաւական գիրուկ Ամստերտամիքի մը, որ ծանօթ էր իր շատակերութեամբ, կէս օրէն առաջ թաւապատ թիկնաթուռի մը մէջ կը նստէր ու սիկառ կը ծխէր, եթէ ծխելն ալ իրեն ծուլութիւն չի համարէր, ևւ կամ պատուհանէն դուրս ապուշ ապուշ բերանը բաց կը նայէր, կէս օրին բեռնակիրի պէս հաց

դադրէր ու ե՞րբ գիշերուանը կ'սկսէր: Ճաշէն յետոյ ուղղակի անկողին կը մտնէր այնքան յոգնած ու պարտասած, իբր թէ բոլոր օրը բեռ կրած կամ փայտ կտրած ըլլար: Վերջ ի վերջոյ այնքան սաստիկ գիրցաւ, որ ալիւրի պարկի մը չափ խոշորցաւ:

Ուտելն ու քնանալն իրեն ֆրասակար եկած էր ևւ երկար ժամանակէ ի վեր ոչ կտտարեալ առողջ ևւ ոչ ալ կտտարեալ հիւանդ էր, ևւ եթէ մէկը զայն լսէր, 365

տեսակ տկարութիւն ունէր, այսինքն տարւոյն մէջ ամէն օր մէկ մէկ նոր նոր անհանգստութիւններ երեւան կ'ելլէր: Ամսօտեւոր ամի մէջ գտնուող բոլոր բժիշկները զինքը դարմանեցին եւ ինք համբերութեամբ դանազան դեղերով բաղադրուած դեղահատներ կը կլլէր. վերջապէս մարդիկ զանի ծաղրելով շրջուն դեղարան կ'անուանէին. բոլոր բժիշկները չի կրցան զայն դարմանել, որովհետեւ անոնց պատուէրներուն եւ ո'չ մէկը կը գործադրէր, այլ կ'ըսէր « Եթէ շան նման պիտի ապրիմ, ի՞նչ բանի համար հարուստ մարդ մը եղած եմ, ու բժիշկը ստակիս համար չուզեր գիտալէկցնել: »

Վերջապէս հարիւր ժամ հեռուն բնակող բժշկի մը համար խնայաւ թէ այնքան ճարտար է՝ որ իր հիւանդութիւնները պիտի բժշկէ, եթէ ճշգրիտ կերպով կատարէ անոր դրած պայմանները ու ասանկով մահն իրմէ պիտի փախչէր, ուր որ ալ իրեն հանդիպէր: Հիւանդը բժշկին վստահեցաւ եւ իր կացութիւնն անոր գրեց. բժիշկն խնայուց անոր թէ ի՞նչ բանի կը կարօտէր, այսինքն ո'չ թէ դեղի, ապա չափաւորութեան ու շարժման եւ ըսաւ. « Սպասէ՛, ընդհուպ քեզ պիտի առողջացնեմ, ու պզտիկ նամակ մ'ալ գրեց անոր հետեւեալ բովանդակութեամբ. « Բարեկա՛մ՝ դէշ կացութեան մէջ կը դրանուիս. քեզ օգտակար կրնամ ըլլալ, եթէ ըսածներուս հետեւիս, որովայնիդ մէջ չար կենդանի մը եւ եօթը բերնով վիշապ մը կայ: Վիշապին համար քեզ հետ անձամբ պէտք է խօսիլ, եւ դուն պէտք ես ինծի գալ, բայց կառքով կամ ձիով պիտի չգաս, այլ կոշկակարին շինած կառքովը, ապա թէ թէ ոչ վիշապը կը ցնցուի եւ կատաղութենէն մէկ անգամէն եօթն ազիքդ մէկտեղ կը ձեղքէ. նաեւ օրն ալ երկու պնակ բանջարեղէն պիտի ուտես, կէսօրին քիչ մը խոզի երշիկ, առաւօտուն ալ հաւկիթ մը ու երեկոյին խտորուկով մսի ջուրէ ապուր միայն. եթէ շատ ուտես, վիշապն ալ հետզհետէ կը մեծնայ, այն ատեն լեարդդ ալ կը պատռէ եւ դերձակն ալ շափդ այլ եւք չառնես, այլ ատողձագործի: Այս է իմ խրատս, եւ եթէ անոնց չհետեւիս, միւս դարնան կիւրին պօռալը չես իմանար: Հիմա կամքը քուկդ է, ինչ որ կ'ուզես, ան ըրէ: »

Երբ հիւանդը բժշկին նամակը կարդաց,

հետեւեալ առաւօտուն կօշիկները ներկել տուաւ, եւ ճամբայ ելաւ, ինչպէս որ բժիշկը պատուիրած էր: Առջի օրը, այնքան կամաց կ'երթար որ խղունջ մը կրնար իր առաջնորդն ըլլալ, եւ ով որ զայն կը բարեւէր, խոժոռ դէմքով մը կը նայէր անոր, եւ սրտին նեղութենէն անոր գլխուն անէծք կարգալու կերպարանք մ'ունէր, եւ ուր տեղ որդ մը ընդ գետին քարչելով երթար, զայն կը ճմլէր. բայց արդէն երկրորդ եւ երրորդ առաւօտուն իրեն այնպէս կը թուէր թէ թռչունները երկայն ատենէ ի վեր նոյն օրուան նման գեղեցիկ երգած չէին. եւ առաւօտեան զեփիւռն այնպէս զով եւ դատաց հարսնուկն աւելի կարմիր կ'երեւար, եւ իրեն հանդպող բոլոր մարդիկ ուրախ կերպարանք մ'ունէին, եւ ինքն ալ երբ պանդոկէն դուրս կ'ելլէր, աւելի զուարթ, թեթեւ ու կայտառ էր, եւ երբ տասնըութերորդ օրը բժշկին քաղաքը հասաւ, միւս առաւօտուն արթնցաւ, այնքան աղէկ կը դար ինքզինքն՝ որ ըսաւ « Ես եւ ո'չ մէկ ժամանակ այսքան առողջ եղած եմ՝ որքան հիմա. յորում բժշկին պիտի դիմեմ, ոչ մէկ տկարութիւն ունիմ, նոյն իսկ ականջս ալ չի դռնչէր »: Երբ բժիշկը եկաւ. բռնեց կեղծ հիւանդին ձեռքն ու ըսաւ. « Ըսէ՛ ինծի թէ ի՞նչ կ'զգաս դեռ: » Հիւանդը պատասխանեց. « Փառք Աստուծոյ, բան մը չեմ զգար, երբ դուք ինծի չափ առողջ էք, այն ատեն շատ կ'ուրախանամ: » Բժիշկը պատասխանեց. « Կ'երեւայ թէ բարի ոգի մը քեզ խրատ տուած է որ խօսքիս հետեւեցար, վիշապը անհետացած է, բայց մարմնոյդ մէջ հաւկիթներ թողած է դեռ, ասոր համար նորէն ստիպուած ես ոտքով տուն երթալ եւ հոն փայտ սղոցել եւ շատ չուտել, որպէս զի հաւկիթներն այսպէսով չաճին, ու դուն ալ ծեր մարդ մը կ'ըլլաս, եւ շատ ուրախ օրեր կ'ունենաս: » Օտարականը ըսաւ. « Պ. բժիշկ, դուք վարպետորդի ու սրամիտ մարդ մ'էք, ես այժմ ձեր խօսքերը լաւ կը հասկնամ: » Եւ իրօք ալ բժիշկին պատուէրին հետեւելով, ջրի մէջ ապրող ձկան նման առողջ՝ 87 տարի, 4 ամիս ու 18 օր ապրեցաւ: Ամէն տարեգլխոյ առթիւ՝ բժիշկին իբր երախտագիտութեան արտայայտութիւն՝ 200 Փրանք կը զրկէր:

Թարգմ.

Ա. ԱՐԴՈՒԿ

ՎԵՐՋԻՆ ԱՆԵՄՔԷ:

Ա.

Ս* * * գիւղէն էր Ստեփան

Իր հայրը գիւղին վաճառականներէն և ժամանակաւ շատ հարուստ էր, սակայն բաղդին խաղերը զանիկա ձգած էին իր այդ բարձր աստիճանէն: Բաղդին խաղերը ըսինք, սակայն թերեւս ուրիշ բան էր պատճառը անոր անկումին: Ստեփան իրմէ մեծ եղբայր մըն ալ ունէր, նոյնպէս երկու փոքրեր: Մեծ եղբայրը հրաժեշտ տուաւ այս աշխարհին, և Ստեփան մնաց իր երկու քոյրերուն հետ: Ստեփանի ծնողքը լաւ դաստիարակութիւն մը առած չէին, կամ սխալած չենք ըլլար եթէ ըսենք բնաւ առած չէին, և նոյն իսկ դաստիարակութեան ի՛նչ ըլլալն անգամ չէին գիտեր... դպրոց չիւրկեցին իրենց զաւակները, քիչ մը չդաստիարակեցին զանոնք:

Ու հիմա իրենց անկումին մէջ՝ ծերացած էր հայրը, ու չէր կրնար աշխատիլ, պառաւցած էր մայրը ու չէր կրնար գէթ գուլպայ հիւսել և քանի մը զրուշ ստակ վատըկիլ: Իրենց անկումը այնչափ մեծ էր որ, տունին մէջ գտնուող գրեթէ ամէն բան ծախեցին, քանի մը անհրաժեշտ եղող բաներէ զատ: զոյգ վերմակներն իսկ ծախուեր էին. ու քիչ մնացեր էր որ տախտակամածին տախտակներն ալ ծախէին...

Սոսկալի անկում:

Օր մը հայրը բռնեց տղուն ձեռքէն ու ըսաւ. «Տղա՛ս, այսչափ ատեն քեզ կերակրեցի, ամէն կերպով խնամեցի, քեզի ծանօթ է մեր վիճակը, գնա՛. աշխատէ՛. հոգա՛ ապրուստդ և եթէ կարենաս մերինն ալ»: Մայրը ըսաւ աղջիկներուն «Գացէ՛ք, աշխատեցէք, ա՛լ հատեր է աշխատելու կարողութիւնս»: Երկու աղջիկները, գիւղին մէջ գտնուող գործարան մը մտան շաբաթական ամէնաչնչին գումարով մը, որուն փոխարէն առաւօտէն մինչև իրիկուն դժընդակ աշխատութիւններու կ'ենթարկուէին և իրիկունը յոգնած, բոլորովին ուժաթափ կուգային իյնալ չոր տախտակամածներուն վրայ: Ո՛ւր էին առջի ճոխութիւնները, ո՛ւր էին կակուղ բարձերը, որոնց վրայ կ'ընկողմանէին շատ անգամ հանդարտիկ... Չէ՛,

չկային ալ: Պզտիկ աղջիկը, որ տկարակամ էր, այս յոգնութիւններուն չգիմանալով քիչ ատենէն հրաժեշտ տուաւ աշխարհին, և անոր հոգին վե՛ր թռաւ, եղբօրը քով երթալու:

Բ.

Ստեփան գիտէր ալ իրենց վիճակը. գիտէր թէ պէտք է որ աշխատի, աշխատելու կարգը իրենն է: Ուստի որոշեց երթալ Ա* * * քաղաքը՝ ուր կը յուսար գործ ընել: Յաջորդ օրը կռնակը տոպրակ մը կախեց, ձեռքը գաւազան մը առաւ և ճամբայ ելաւ: Տխուր էր: Եւ ինչո՞ւ տխուր չըլլար, մէկը որ տեսած է ծնողքին սոսկալի անկումը ուրկէ ելլել անկարելի էր ալ, երբ կը տեսնէ թէ մուրալու աստիճանին եկած են, երբ պիտի թողու իր ծննդավայրը և հեռո՞ւ պիտի երթայ, հեռո՞ւ, պանդխտութեան դառն լուծը կրելու համար, կրնա՞յ զուարթ ըլլալ:

Քալե՛ց Ստեփան, քալե՛ց միշտ: Ան կարծես ձայն մը կը լսէր իր ետեւէն. քալէ՛... քալէ՛... ձայն մը՝ զոր մեծ ոգի մը կը հանէ. քալէ՛... քալէ՛...:

Իրիկունը մօտ էր հիմա, լուսինը ելած էր արդէն, ու հունա՛, երկինքի անհուն կապոյտին մէջ կը շողայ Լրատ կարմիր մոլորակը: Տակաւին կը քալէ ան:

Տերջապէս ա՛լ մօտեցած էր գիւղի մը, հեռուէն կը տեսնէր այն ճրագի լոյսերը՝ որ գիւղին տնակներուն պատուհաններուն ճեղքերէն դուրս կը ցոլանային: Գիւղ հասաւ Ստեփան յոգնութենէն շնչասպառ: Փռուեցաւ հիւղակի մը առջև, ու այնպէս կեցաւ քանի մը վայրկեան: Շուները սկսան հաչելով անոր վրայ վազել, իբր թէ գող մը կար, բայց անիկա քարով մը ետ մղեց զանոնք. աւելի կատաղութիւնով հաչեցին շուները. այնպէս որ հիւղակէն մարդ մը դուրս ելաւ: Ալեմօրուս ծերունի մըն էր ան. անոր դիմագծութիւնը բարութիւն կ'արտայայտէր: Ստեփան կը հեկեկար. ծերունին շուները վռնտեց, և անոր քով երթալով նայեցաւ երեսն ի վար ու հարցուց. — Այս ատեն ի՞նչ կ'ընես հոս, ո՞վ ես դու, ուրկէ՞ կուգաս:

— Աստուծոյ սիրուն, պատասխանեց Ստեփան աղէկտուր ձայնով մը, պատառ մը

հաց, գաւաթ մը ջուր, վերջը կը խօսիմ ատոնց վրան:

— Եկուր իմ ընկալարանս և հոն հանգչէ, յարեց բարի ծերունին:

Գացին հիւղը ու երբ Ստեփան հանգչեցաւ՝ իր պատմութիւնը ըրաւ ծերունիին, որ ուշադիր ունկնդրեց անոր: Գիշերը հոն պառկեցաւ Ստեփան: Միւս օր գեղացին հաց մը տուաւ անոր և անիկա շնորհակալ ըլլալով մեկնեցաւ:

Գ.

Միջօրէի արեւին կիզիչ ճառագայթները սկսեւր էին հիմա իյնալ դաշտերուն վրայ:

Երիտասարդ մը կը քալէր դաշտերուն մէջէն, ութսունամեայ ծերունիի մը պէս կը քալէր, կը վազէր այնպիսի մարդու մը պէս՝ որուն ճակատագիրն է քալել: Հազիւ թէ կրնար շունչ առնել, ու նստեցաւ բարձր ընկուզենիի մը տակ: Խորունկ հառաչանք մը հանեց, հառաչանք մը՝ որ թերեւս կեանքին մէջ առաջինը եղած էր: Կէս ժամի չափ հանգչեցաւ ծառին շուքին տակ, ինք որ շուք մըն էր և պիտի անցնէր. ու նորէն շարունակեց իր ճամբան:

Ճամբորդը Ստեփանն էր:

Քալեց նորէն մինչև իրիկուն, ու քաղաքի մը չհանդիպեցաւ: Այնպէս կ'երևար թէ ժամը մէկը եկած էր ալ: Պայծառ լուսին մը կար այն գիշերը: Ստեփանի սուր աչքերը հեռուն լոյսեր նշմարեցին. ուրեմն հոն քաղաք մը կար. կէս ժամէն հասաւ քաղաքը: Հոն ալ նստեցաւ տունի մը տակ, ինչպէս նստեր էր գիւղին մէջ, սակայն ո'չ շուն եկաւ քովը, ո'չ ալ ծերունի. ուստի հոն քնացաւ: Միւս առտու կանուխ արթընցաւ, թէև շատ յոգնած էր, որովհետև իր բարձր հոգը եղած էր:

Այն օրը քաղաքին շուկան պտտեցաւ, շատ մը վաճառատուններ մտաւ պաշտօն մը խնդրելու. բայց չափերը կը պատասխանէին թէ պաշտօնեայի պէտք չունին, և շատերն ալ կը հարցնէին թէ գիր գրել գիտէ՞ր. ու այսպէս մնաց այն իրիկունն ալ, ու դնաց խանի մը դուռին առջևը պառկեցաւ:

Ընելիքը որոշեր էր: Միւս օրը կիրակի էր. հարցուց եկեղեցին, գնաց հոն: և դուռին տակ նստեցաւ գլխիկոր, առջևը թաշկինակ մը փռած. երբ եկեղեցիէն ելան,

տեսաւ թէ երեք դահեկան ստակ դրուած էր, գոհութիւնով առաւ այս գումարը և միւս օրը բեռնակիրի չուան մը գնեց ու բեռնակիր եղաւ. սակայն ինքը օտարական էր հոն, ուստի շատ գործ չկրցաւ ընել. հազիւ թէ օրը 30-40 փարա կը վաստկէր. և ասիկա ալ հացին կը բաւէր: Այսպէս երկու ամիս անցաւ:

Դ.

Աշնան մէջ ենք:

Ցուրտ հոգի մը կը փչէ. դալկահար տերեւները գետինը կ'իյնան: Բնութեան մահն է որ կ'սկսի, և այս մասին հետ աղքատին վիշտը ու տառապանքը կը ծնին:

Ստեփան չկրցաւ դիմանալ իր աշխատութիւններուն. չոր տախտակի մը վրայ չկրցաւ պառկիլ առանց վերմակի, ու սոսկալի կերպով հիւանդացաւ: Սակայն չկար մէկը որ խնամէր զինքը. չունէր ստակ, որ ինքզինքը բժշկի մը ցուցնէր, ու դարմանէր: Այսպէս մահամերձ վիճակի մէջ ինկած էր Ստեփան խանին ներսի կողմը, տախտակի մը վրայ:


Օրհասականը մօտեցեր էր. վերջին ճիգ մը կ'ընէր խեղճ հիւանդը ապրելու համար, աւա՛ղ, ժամանակը անցած էր: Ու մահը, այս անողորմելի ճիւղը, վայրկեանէ վայրկեան կը մօտենար անոր, ու վերջապէս հնձեց այս կեանքն ալ, կեանք մը՝ որ այնքան դառն եղած էր:

Ու ստեփան իր օրհասականին մէջ, երբ իր շունչը կը փչէր. սա խօսքերը կ'արտաբերէր, տխուր շեշտերով. « Հա՛յր, չեի ուզեր յիշատակդ պղծել, սակայն կ'անիծեմ ճիւղ մա քեզ, որովհետեւ երկու տող գիր գրել չտրվեցուցիք ինձի » և փակեց աչքերը յաւիտենապէս:

* * *

Փոքրիկ մանուկներ և պատանիներ, տեսէ՛ք թէ անուսում մարդ մը ինչ վիճակ կ'ունենայ: Շատ անգամ երկու տող գրել կարողալը մարդու մը կեանքը կը փրկեն:

ԱՇՈՏ Յ. ՊԱՉՊԱՉԵԱՆ



ՓՈՒՐԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՉԲԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Շաբ. 9րդ քիւն)

ԳԼՈՒԽ Ե.

ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՔ ԵՒ ՓԻՒՆԻԿԵՑԻՔ

Բաբելոն եւ Նինուէ. Ասորեստանի առաջին իշխանավարութիւնը. — Տիգրիս եւ Եփրատ՝ Դրախտի ու Տապանի պատմական գետերը, ծանօթ լեռներէն իջնելով իրենց ջուրերը միացնելէ յետոյ, կը թափին Պարսկական ծոցին մէջ: Այս երկու մեծ գետն-



Ասորեստանցի վեհապետի մը բարձրաքանդակ արձանը, (Անգլիոյ կայս. թանգարանին մէջ)

րուն մէջտեղ կայ երկիր մը՝ հիւսիսային կողմէ բարձրաբերձ ու անմատոյց լեռներով շրջապատեալ, իսկ անոր կեդրոնն ու հիւսիսային կողմը, հարթ տափարակ ու աւազուտ երկիրով մը սահմանաւորուած: Այս երկիրն է Միջագետքը, որուն հարաւային կողմը կը բնակէին ֆուլիսները, այսինքն Նոյ Նահապետին Բաբելոնը որդւոյն սերունդներէն յառաջ եկած ժողովուրդները. անոր լեռնափոխերը՝ Տուրանական այլ եւ այլ ցեղեր. մէջտեղը՝ Սեմեանք, ճերմակ ցեղը, որուն սերունդները պատմութեան մէջ Ասորեստանեայք, Եբրայեցիք, Արամեցիք եւ

Փիւնիկեցիք անունով հռչակաւոր են:

Այս երկրին մէջ շինուեցան երկու մեծ քաղաքներ, անոնց մին՝ Բաբելոն, Եփրատ գետին ափանց վրայ. միւսը՝ Նինուէ, Տիգրիսի գետեզերքին վայ, որք փոխնիփոխն ասորական իշխանութեան մայրաքաղաքներն եղան: Պատմական աւանդութեանց ըսածին նայելով՝ Բաբելոն քաղաքը պատսպարուած էր 100 մէթր բարձրութիւն եւ 60—80 քիլոմէթր շրջապատ ունեցող ամուր ու լայն պարիսպներով:

Եգիպտոսի ԺԼրդ իշխանապետութեան շրջանի Փարաօնները տիրեցին այս երկրին եւ երկու հարիւր տարիներէ աւելի զայն իրենց իշխանութեան տակ հպատակեցուցին: Երբ Եգիպտոսի քաղաքական ու քաղաքակրթական անկումն սկսաւ Փարաօններու Ժրդ իշխանապետութեան հետ, Ասորեստան



Ասորեստանցւոյ Նէբրովզ չափուածը


տանի իշխանները թօթափեցին լուծը, եւ իրենք տիրեցին Եփրատի արեւմտեան կողմը Սուրիացւոյ երկրին, Տիգրիսի արեւելեան կողմը՝ Մեդաց կամ Մարաց աշխարհին:

Այս իշխաններու մասին՝ պատմական յիշատակարանք իրենց վաւերական տեղեկութիւնները տալ կ'սկսին Ասուրի կամ Ասուրնազիրբադ եւ անոր Սաղմանասար որդւոյն հետ: Այս վերջինը, ինչպէս կը պատմէ Աստուածաշունչը, Բարայէլի Աքաբ թագաւորին յաղթեց: Ասոր յաջորդներէն մէկուն կինն էր Շամիրամ, որ ասորական իշխանութեան միակ ու բացարձակ վեհապետահին մնալով, կառույց կախաղանաւոր պար-

տէգները, որք հին պատմութեան մէջ, աշխարհի եօթն երեւելի հրաշալեաց մին հըռչակուած են, եւ կարգ մը աշխարհակալ արշաւանքներէ ու աշխարհաշէն մեծագործութիւններէ յետոյ, իր մայրաքաղաքը շրջապատեց 66 հազար մէդր երկար պարիսպով մը այնքան լայն՝ որ վրայէն վեց կառք քով քովի կրնային անցնիլ:

Իր յաջորդներէն Սարդանաբադի վարած թոյլ ու շուայտ կեանքէն օգտուելով, Քաղդէացի Փուղ և Մետացի Վարապէս կամ Արբակէս իշխանները իրեն դէմ ընդվզեցան: Առնական արիւթենէ զուրկ այս իշ-

որ իրեն հարկատու լինի: Փուղի մեռնելէն վերջը՝ Նինուէի հին թագաւորներու ցեղէն հզօր իշխան մը, Դիլատփադասար (744) ըմբոստացաւ և Բաբելոնի տիրելով հաստատեց Ասորեստանի երկրորդ թագաւորութիւն մը: Պաղեստինէն մինչեւ Ինդոս ըրած իր հեռաւոր արշաւանքները, եթովպացի Սաբակոն թագաւորին վրայ տարած վճռական յաղթութիւնը, Նինուէն վերստին շինող Սէնէքէրիմ թագաւորին (707) յաղթական յաջողութիւնները, Եգիպտոսն աշխարհակալող Ասարհադդոկ կամ Ասարդակի քաջագործութիւնները, և Փոքր Ա-



Կախաղանաւոր պարտէզնը

խանը, փոխանակ իր ամրապարիսպ քաղաքին դռներն իր հին հպատակներուն առջեւ բանալու կամ ընդդիմակալելու, փայտակոյտէ խարոյկ մը պատրաստել տուաւ և ինքզինքը անոր մէջ նետեց (789):

Ասորական երրորդ իշխանապետները (744-606 Քա. է առ.) — Բաբելոնացոց քաղդէական պետը՝ Փուղ, Նինուէի թագաւորաց աշխարհակալական ծրագրերուն հետեւելով, արշաւեց Եփրատայ արեւմտեան կողմի ժողովուրդներուն դէմ, և բռնադատեց Յուդաի կամ Հրէաստանի Մանայէմ թագաւորը

սիա եկող ուրիշ Սարդանաբադի մը արիական գործերը՝ ինքնին Ասորական նոր իշխանապետութեան հզօրացումին ու ծաղկումին յայտնի ապացոյցներն են: Բայց այս երկրորդական իշխանութիւնն ալ՝ առաջնոյն պէս, կործանեցաւ Բաբելոնացոց ու Մարաց հաւաքական վտարանջումի յարձակումի երեսէն: Նինուէի վերջին թագաւորը՝ Սաբակ թշնամիներուն ընդդիմակալելու տրկարութեանէն յուսահատած՝ իր գանձերուն հետ ինքզինքը փայտակոյտի խարոյկին մէջ նետեց, որով և Նինուէ հիմնայատակ կոր-

ծանեցաւ (606) . Ութսուն դարեր իր փրատակաց տակ թաղուած , անհետացած մընալէ յետոյ՝ Պրանսացի մը՝ Պօդա՝ Տիարպէքիրի Պրանսական հիւպատոսը , զայն վերստին գտաւ (1884) , պիղելով անոր աւերակները , Մուսուլի մօտ՝ հանդերձ իր արուեստներով , իր լեզուով , իր բարքերովն ու իր սովորութիւններով , որոնք ապացուցուած են պեղածոյ յիշատակարաններու բեւեռագիր արձանագրութիւններէն , փորագիր քանդակներէն ու արձաններէն որոց մեծագոյն մասը Պրանսական Թանգարանի մէջ ամէնուն հիացման արժանի հալիսոսական աւարկաներ են :

Ասորական վերջին իշխանութիւնը . Բաբելոնի առումը Կիւրոսէն . (530 Ք. է առ.) . — Նինուէին տեղ անցաւ Բաբելոն , որու թագաւոր Նաբուգոդոնոսորը Կարկէմիշի մէջ Եգիպտացի Նեքաւով փարսոնին յաղթելէն յետոյ , կործանեց ու աւերեց , Երուսաղէմը (588) , յարձակեցաւ Փիւնիկիոյ կամ այժմեան Սուրիոյ ամրապարիսպ Տիւրոս ծովեզերեայ քաղաքին վրայ , և աշխարհակալ անցաւ Եգիպտոսէն : Պարսից թագաւորը Կիւրոս , Բաբելոնն առաւ (538 Ք. է առ.) : Մակեդոնացի Մեծն Ալէքսանդր իրեն մայրաքաղաք ըրաւ անիկա՝ զոր յետոյ , Ալէքսանդրի վաղահաս մահէն ետքը , իրեն յաջորդող Սելեւոս զօրավար ու անոր յաջորդք իրենց սեպհականացնելով , Բաբելոնի եւ անոր իշխանութեան ենթարկուած երկիրներու տէրը եղան : Հին Բաբելոնի անունը կը յիշեցնէ արդի Պաղատաւը :

(Շարունակելի)



ՏՂԱՔՆԵՐԸ ԻՆՉ ԿՐՆԱՆ ԸՆՆԷԼ

Միշտ կան մարդիկ որոնք տղոց վրայ հաշտ աչքով չեն նայիր . կը կարծեն թէ հասուն տարիքը թեւակոխելէ առաջ տղայ մը եւ ոչ մէկ բանի օգտակար է : Ասիկա սխալ կարծիք մըն է անշուշտ , եղած է շատ առիթներ երբ մեծ մարդ մը կէս ճամբան կանգ առած է , տղայ մը կարող եղած է յաջողիլ եւ գործն ի կատար հանել՝ ըլլայ

գիպուածով , ըլլայ անգիտակցութեամբ եւ մանկական ճարպիկութեամբ :

Ծոյլ , ստահակ տղայ մըն էր որ շոգեշարժ մեքենաներուն ամէնէն կարեւոր մէկ մասը հնարեց , իրեն պաշտօնն էր շոգենաւի մը մէջ երկու ծորակ դարձնել , մին գոցած ժամանակը միւսը բանալով , որով շոգին մէջ մը դրանին վրայէն կը ճընչէր , մէկ մըն ալ տակը կ'անցնէր : Տղուն գրպանը գնտակներ կային , սրտին մէջ ալ խաղալու մեծ փափաք մը , բայց վայրկեան մը իսկ չէր կրնար զործը թողուլ , ուստի , դիտեց թէ՝ դրանին որ տեղը բարձրացած ատեն ծորակը կը գոցէ եւ միւսը կը բանայ . յետոյ չուանով անանկ մը ծորակները կապեց միւսին որ մեքենան ինքնիրեն կը գործէր այսինքն ծորակներուն մին կը բանար և միւսը կը գոցէր : Առաջին մեքենավարը դիտեց որ տղան գնտակ խաղալու կը պարապի , իսկ մեքենան ինքնիրեն կը դառնայ , մօտէն նայեցաւ , չուանները փոխեց և երկաթէ ձողեր դրաւ տեղը : Ահա՛ գիտ մը որ եւ ո՛չ մէկ մարդու մտքէն անցեր էր :

Ակնոցի ապակի շինող խեղճուկ դործաւորի մը ութը—տասը տարեկան զաւակը , օր մը հօրը սեղանին վրայէն ապակիները խառնելով մէջէն նայելու կ'զբաղէր . յանկարծ սոսկալով ապակիները գետին նետեց . տեսած էր որ դիմացի սուները շատ մօտիկ կուգային : Գործաւորը կրկնեց փորձը , կալիլէոսի զնաց խօսեցաւ տղուն ըրած խաղին վրայ , եւ մարդկութիւնը օժտուեցաւ երկինքը դիտող գործիներով :

Էտիսըն . դեռ Ամերիկայի մեծ երկաթուղիի կառքերուն մէջ լրագիր կը ծախէր , անանկ խնդիրի մը ելք տուաւ որ բոլոր ճարտարագէտները շփոթեցուցեր էր : Երկաթուղիին ընդհանուր տնօրէնը միջոց մը կը խորհէր իրեն յանձնուած ահագին գծին պաշտօնէաներուն հետ , մէկ ծայրէն միւսը , անմիջական յարաբերութիւն մը հաստատելու , անանկ որ ուզած վայրկեանին , ուզած պաշտօնէին կարենայ հրաման մը տալ . էտիսըն արդէն բաւական ելեքտրականութեան վարժուած էր . տեսաւ որ ամբողջ գծին երկայնութեամբ երկաթէ վանդակորմ մը կայ , շուտ մը իր ձեռքովը գործիքներ շինեց , տեղերը անցուց , և զար-

մացած տնօրէնը քանի մը հարիւր քիլոմէթր հեռուն հրամաններ տալ սկսաւ:

Կ'ըսեն թէ Մարթոնի իւր անթեղ հեռագրի գիւտը շատոնց ըրած էր: Երբ պարզ դպրոցական մըն էր, սկսաւ այդ խնդիրով զբաղիլ, խնդիր մը՝ որ մինչեւ այն ատեն և ո՛չ մէկուն միտքը ինկած էր: Աշխատեցաւ, և վերջապէս Համալսարան մտած ժամանակը արդէն խնդիրը լուծուած էր:

Շատ անգամ, երբ դպրոցական էինք, լուցկիի երկու տուփերու տակէն թել մը կապելով սրահին մէկ անկիւնէն միւսը կը խօսակցէինք, բայց բնաւ մտքերնուս չէինք անցնել թէ հեռախօսի գիւտին գաղափարը այդ մանկական խաղէն առնուած է:

Դեռ շատ բաներ կան ցուցնելու թէ տղաքներն ալ իրենց օգուտը ունին: «Պզտիկ դիւցազներ» վերնագրին տակ երբեմն պիտի հրատարակենք 10-15 տարեկան տղաքներու քաջագործութիւնները, որոնք իրենց քոյրը կամ ընկերը ազատելու համար չեն վարանած գետը նետուիլ կամ կատաղած շան մը դէմ մաքառիլ:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԵՐ

ՃԱՐՈՆԵԱՆ ՑԵՂ

(Շարունակութիւն Գրդ թիւէն)

Քաղաքականի դալով, Միքաէո անուանեալ պետի մը շնորհուած է դերագոյն, հոգեւոր եւ աշխարհային իշխանութիւնը:

Երկու կրօնք կայ Ճարօնի մէջ, Պուտտայականութիւնն ու Քամիսներու կրօնքը: Կոնփիկիուսի կրօնքը քիչ տարածուած է հոն:

Աւելի մանրամասնօրէն ճանչցնելու համար Ճարօնի հետաքրքրական ժողովուրդը, Զուիցերիոյ լիազօր դեսպան Պ. Ումպէրթի Ճարօնի մէջ ունեցած բնակութեան պատմութենէն մի քանի էջ փոխ պիտի առնենք: Սոյն գիրքը 1870ին «Ճարօն» անուամբ հրատարակուեցաւ: Պ. Ումպէրթօ, Թայքունի առ Միքաէո տուած պաշտօնական այցելութեան մը արարողութեանցը ներկայ գտնուած է, որոյ վրայ հետեւեալը կը պատմէ:

«Իմ Ճարօնի մէջ բնակած միջոցիս,

Թայքունի առ Միքաէո տուած մարդասիրական այցելութեանը հանդիպեցայ:

«Տարօրինակ դէպք մ'էր այս, որ մեծ ազդեցութիւն մը պատճառեց, բնիկ արուեստագէտներու վրձիններուն ներշնչում ազդեց եւ օտարաց առիթ հայթայթեց՝ որով կարող եղան սովորականէն աւելի լաւ կերպով տեղեկութիւն ստանալ երկու վիհ կայսերց փոխադարձ յարաբերութեանց վրայ: Անոնց անձնական կացութիւնը արդարեւ եզական հետաքրքրութիւն կը պատճառէ:

«Նախ և առաջ, Միքաէոն՝ ծննդեան առաւելութիւնն եւ իր սուրբ պաշտօնին երեւոյթն ունի: Արեգական թող, նա՝ չաստուածոց, կիսաստուածոց, դիւցազանց եւ ուրիշ մեծ կղզիներու կայսրութեան սկիզբէն ի վեր անընդհատ յաջորդաբար Ճարօնի վրայ թագաւորող ժառանգական վեհապետաց աւանդութիւնը կը շարունակէ: Կրօնի պետ, ժողովուրդը ինչ ձեւի տակ որ ճանչնայ կրօնքը, նա Քամիսներու հին ազգային կրօնքին վեհ քրմապետն է: Ամառուան արեւադարձին՝ երկրին զոհ, եւ ձմեռուան արեւադարձին՝ երկնից զոհ կը մատուցանէ: Չատուած մը յայտնապէս վերակացու դրուած է անոր թանկազին ճակատագրին պահպանութեան համար եւ Քամօ լեռան գագաթին վրայ, իր բնակած տաճարէն գիշեր եւ ցերեկ կը հսկէ կայսեր վրայ:

«Աստուածպետական կայսր եւ ժառանգական վեհապետ, աներկբայաբար երկնքէն է որ Միքաէոն կ'ստանայ իր ժողովուրդին վրայ ունեցած իշխանութիւնը: Մերթ ընդ մերթ, սակայն, կը հաճի մեծաշուք ու պատուարել տիտղոսներ տալ, բազիններու երախտաւոր աւատական ծեր քուրմերու:

«Գալով Թայքունի, նա, ինչպէս ամէն մարդ գիտէ, հասարակ ժողովուրդներու երջանիկ ժառանգորդն է: Իր իշխանութեան հիմնադիրներն, որոնք Միքաէոյին նախորդ ժառանգներն էին, արդարեւ իրենց տիրոջ և պետին բոլոր գանձերը, հողերը ու եկամուտները փճացուցին, իբր թէ երկրային ամէն զբաղումներէ դայն ազատելու կոչումն ունենային:

«Թերեւս Միքաէոն ալ անոնց գործելու եղանակին խիստ չափազանց հաճոյակատարութիւն ցոյց տուած էր, երբ՝ դղեա-

կին պարտեզին մէջ ամէն օր պտտելու համար, իրեն երկանիւ կառք մը ընծայէին, որոյ լծուած էր եզ մը, այս արտօնութեան համար՝ որ անշուշտ խիստ մեծ էր այնպիսի երկրի մը մէջ ուր ոչ ոք կառք կը նստէր, պէտք չէր որ ինք զոհէր ալեղնաձգութեան առնական վարժութիւնները, բաղկի որսորդութիւնը, եղջերուի եւ վարադի համար յատուկ եզող հեծեղազօրութիւնը: Այժմ կ'ըսուի թէ, Միքատօն միայն իւր անձին խնամոց համար յատկացեալ կանանց միջոցաւ հազորդակցութիւն ունի: Ասոնք են որ զայն կը հագուեցնեն կը սնուցանեն, ամէն օր անոր նոր հագուստ մը կը պատրաստեն եւ անոր կերակուրը կը կերցնեն այնպիսի սեղանի անօթներու մէջ, որք այն օրն իսկ ելած են՝ դարերէ ի վեր այս ապրանքին մենավաճառութիւնն ունեցող գործարանէն:

« Երբէք սուրբ անձին ռաբերը գետնին չեն հպիր, երբէք նորա գլուխը օդին, լոյսին եւ պիղծ նայուածքներու առջեւ չերեւար: Երբէք, ի մի բառ, Միքատօն, պէտք չէ ոչ տարերաց, ոչ արեգակին, ոչ երկրին, ոչ լուսնին ոչ մարդոց եւ ոչ իսկ ինքզինքին շօշափումը զգայ: »

« Պէտք էր որ տեսարանը ի Քիօթօ տեղի ունենար, այն սուրբ քաղաքին մէջ ուրկէ չէ կարող հեռանալ Միքատօն: Այդ քաղաքին մէջ անձնապէս նա իր պալատը եւ իր ընտանեաց հին տաճարներն միայն ունի: Նոյն իսկ յիշեալ քաղաքը աշխարհային կայսեր իշխանութեան տակն է, բայց այս վերջինը նորա եկամուտները հոգեւոր վեհապետին ծախուցը յատկացուցած է եւ հաճած է հոն պահապան զօրք դնել քրմապետական իշխանութեան պահպանութեան համար: »

« Երկու կողմէ ալ ամէն պատրաստութիւն կատարուած ըլլալով, հրովարտակ մը որոշեց այն օրն ուր Թայքունը իր բնակարանէն դուրս պիտի ելլեր, անհուն եւ բազմամարդ նէտոյէն՝ որ խիստ նոր քաղաք մ'է եւ պետութեան, քաղաքական վարչութեան, ծովային եւ ղինուորական դպրոցին թարգմաններու, համալսարանին, բժշկութեան եւ փիլիսոփայութեան ակադեմիային կեդրոնն է: »


« Թայքունի առջեւէն կ'երթային եւրո-

պակսն կերպով հագուած զօրաց բանակ մը, եւ մինչդեռ այս հետեւակներու, հեծեղազօրներու եւ հրձիգներու ընտիր բանակը, դէպ ի Քիօթօ կը դիմէր Թօքայտօի մեծ ճանապարհէն, նա հրաման տուաւ իր պատերազմական նաւատորմին որպէս զի ներքին ծովը երթալու համար առաջաստ բանայ: Ինքը Լիւմանանուն շքեղ շոգենաւը նստաւ, զոր դնած էր Տանթ եւ ընկ. նէն, 50,000 տոլարի: Ուրիշ վեց շոգենաւներ անոր կ'ուղեկցէին: Ծարօնցի նաւաստիներէ կառավարուած այս նաւային խումբը, Եէտօի ծովախորշին դուրս ելաւ, Սակամիի սարաւանդը եւ Իտսուի հրուանդանը մտաւ: Լինչօթ ընի նեղուցին կիրճերէն անցաւ, և վերջապէս խարիսխ նետեց Հիօօի նաւահանգիստին մէջ, ուրկէ Թայքունը վար առին, թնդանօթներ արձակելով: »

« Քանի մը օր վերջը հանդիսաւոր կերպով ի Քիօթօ մտաւ իր բուն բանակէն զատ առանց ուրիշ պատուոյ ցոյցերու, սա պատճառաւ թէ Միքատօն ոչ բանակ ունէր, ոչ թնդանօթ, այլ միայն զօրահանդէսի յատուկ եզող ալեղնաւորաց խումբ մը: Որք իր ազգատոհմին, ազնուական աւատականներու ընտանիքներու մէջէն ժողովուած են: Մինչեւ իսկ այս համեստ պայմաններով շատ դժուարութեամբ կը հոգար նա իր արքունիքին ծախքը, իմէ բան մը կայ, որով նա կարենայ դեռ իր պատուոյ աստիճանը պահել, այն ալ իր բազմաթիւ բարձր պաշտօնեայիններուն վերջին ծայր անշահախնդրութիւնն է: Այնպիսի պաշտօնեայներ կան, որք անոր կը ծառայեն միայն անոր համար որ արքունական տեղակ մը կանոնադրական հին ու շքեղ հանդերձը ձրիապէս հագնելու կարող ըլլան: Երբ այս պատմուճանը ձգելէ յետոյ՝ իրենց բնակարանը վերադառնան, այս հպարտ ազնուականները, կը խոնարհին կտաւագործութեան կամասղնեգործութեան արուեստը գործել: Քիօթօի սքանչելի մետաքսագործութիւնները, որոնց շինուածքին վրայ այնքան կը հիանանք, ազնուական տուներէն յառաջ կուգան, որոնք իրենց անունը արձանագրել կուտան Քամիսներու տարեցոյցին մէջ: »

(Շարունակելի)

Ա. Մ.



ԳԻՏԱԿԱՆ ՎԵՊ

ՓԻՒՆՆ ՎԵՍՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

(Շարունակություն 9-րդ րիսին)

Այս խոսակցությունը լատիներեն տեղի ունեցեր էր. ամեն բան կը հասկնայի եւ

եղել եւ եթէ կարելի է խառնարանը զըն- նել :

— Շատ կը ցաւիմ որ, յարեց Պ. Ֆրիտ- րիքսըն, զրազումներս չեն ներեր որ բա- ցակայ գտնուիմ, թէ ոչ, սիրով պիտի ըն- կերանայի ձեզ :

— Ո՛հ, ո՛չ, ո՛չ, պատասխանեց փու- թով հօրեղբայրս, մէկուն անհանգստութիւն տալ չեմ ուզեր, Պ. Ֆրիտրիքսըն, բոլոր սրտովս շնորհակալ եմ: Ձեզ նման գիտունի մը ներկայութիւնը թէեւ թանկագին է, բայց ձեր պաշտօնին պահանջումները:



ՀԱՆՍ՝ Պա, ոն Լիտէնպորքի առաջնորդը

հազիւ կրնայի ծիծաղս բռնել, տեսնելով որ հօրեղբայրս պարապ տեղը կ'աշխատի ամէն կողմէ դուրս պոռթկացող ուրախութիւնը զսպել: Անմեղ երեւոյթ մը առնել կ'ուզէր ու ծեր սաղանի մը դէմքը առեր էր:

— Այո՛, կրկնեց, ձեր գիտողութիւնը իրաւացի է, պիտի ջանամ Սնէֆէլսէն վեր

կը սիրեմ կարծել թէ, հիւրընկալնիս, իր իսլանտացիի պարզամիտ հոգիովը չի կրցաւ հօրեղբորս չարամտութիւնը գուշա- կել :

— Շատ աղէկ կ'ընէք, այդ հրաբուխէն սկսելով, Պ. Լիտէնպորք: Բայց ի՞նչպէս Սնէֆէլսի դերակազմին պիտի երթաք:

— Ծովի ճամբով, ծոցէն կ'անցնինք, ամէնէն կարճն առ է:

— Այո՛, բայց անկարելի է:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ եւ ո՛չ իսկ նստակ մը ունինք Րէյքեավիքի մէջ:

— Չար սատանայ:

— Աւելի լաւ է ցամաքէն երթալ, ծովեզերքին հետեւելով. թէեւ քիչ մը երկար կը տեւէ՝ բայց հետաքրքրական է:

— Իրաւունք ունիք, երթամ առաջնորդ մը ճարեմ:

— Հատ մը ունիմ ես, պատրաստ:

— Վստահելի՞, խելացի՞ մէկն է:

— Այո՛, էյաէրի որսորդ է, ճարակի մէկն է, շատ աղուոր դանիերէն կը խօսի:

— Խոր կրնամ տեսնել:

— Վաղը, երբ կը հաճիք:

— Ինչո՞ւ այսօր չէ:

— Որովհետեւ վաղը միայն կրնայ դալ:

— Ուրեմն, վաղը, ըսաւ հօրեղբայրս հառաչելով:

Այս կարեւոր խօսակցութիւնը վերջացաւ Գերման գիտունին Իսլանտացի գիտունին ուղղած ջերմագին շորհակալիքներով: Ճաշի միջոցին հօրեղբայրս շատ բան սորովել էր, Սաքնիսիւմի պատմութիւնը, ծածկագիրը գրուելուն պատճառը, թէ՛ հիւրընկալնիս մեզի հետ չպիտի մնայ եւ վերջապէս՝ յաջորդ օրը վստահելի առաջնորդ մը պիտի ունենանք:

Իրիկուան նորէն պղախ պտոյտ մը ըրի եւ կանուխեկ դարձայ պառկեցայ: Երբ առտուն արթնցայ, քովի սենեակին մէջ հօրեղբորս ձայնն առի, շուտ մը ելայ հագուեցայ եւ քովը գացի: Հօրեղբայրս ոտքը ձեռքը շարժակելով կը խօսէր բարձրահասակ եւ ուժեղ երեւոյթով մէկու մը հետ: Այս խօսակցը՝ ձեռքը ձեռքին վրայ՝ հանդարտ ու լուրջ դիրքով մը մտիկ կ'ընէր առանց ամենափոքր շարժում մը ընելու, մինակ, այո՛ կամ ոչ ըսելու համար դիւրիւր առաջ կամ ետ կը շարժէր, այս ալ այնչափ թեթեւ կերպով որ, ուսերէն վար կախուած դեղին մագերը հաղիւ թէ կ'երերային:

Այս մարդը տեսնողը չէր կրնար գուշակել թէ որսորդ մըն է ան, բայց վերջէն Պ. Ֆրիտրիքսըն բացատրեց ինծի թէ «էյաէրի որսորդ» էր, արդարեւ այս թըռ-

չուններու փետուրները, որոնք կղզիին մեծ աղբիւրներէն մին են, հաւաքելու համար շատ շարժում ընելու պէտք չկայ: Ամրան առաջին օրերուն, էյաէրի էգը՝ տեսակ մը սիրուն բազ, կ'երթայ ծովեզերքի ժայռերուն մէջ բոյն մը կը շինէ, զոր կը ծածկէ կուրծքէն բրցուցած խիստ նուրբ փետուրներով: Որսորդը կուգայ բոյնը կ'առնէ, իսկ թռչունը ուրիշ մը կը շինէ, որսորդը նորէն կուգայ, շարունակաբար մինչեւ որ այլ եւս էգին վրայ փետուր չմնայ: Կարգը կուգայ արուին՝ իր փետուրները փեթթելու: Որսորդը այդ բոյնին չդպիր, որովհետեւ առեւտուրի մէջ շատ արժէք չունենար արու թռչունին փետուրը: Ուստի բոյնը կը լմնայ, թռչունը հաւկիթը կ'ածէ ու կը թխտէ: էյաէրները՝ որսորդներուն դիւրութիւն մը տալու համար կարծես, իրենց բոյները փոխանակ ցից ժայռերու վրայ հաստատելու, դիւրամատչելի տեղեր կը շինեն:

Հօրեղբորս խօսակցը՝ Հանս, մեր պագայ առաջնորդն էր, որ Պ. Ֆրիտրիքսընի յանձնարարութեամբ եկած էր հօրեղբորս հետ պայմաններուն վրայ խօսելու: Ասանկ շուտ լմնցող սակարկութիւն չէի տեսած, որովհետեւ ո՛չ հօրեղբայրս վճարելիք վարձքին վրայ գիտողութիւն կ'ընէր, ոչ ալ Հանս ստանձնելիք գործին ծանրութեան վրայ առարկութիւններ կը յարուցանէր: Որոշուեցաւ որ առաջնորդը դասախօսին ծառայութեան մէջ մնայ որքան ատեն որ մեր գիտական խուզարկութիւնները տեսնուան: ասոր փոխարէն հօրեղբայրս ամէն շաբաթ իրիկուն առաջնորդին պիտի վճարէր 80 դահեկանի մօտ գումար մը: Հանս մերժեց կանխավճար մը ընդունիլ եւ քաջուեցաւ, Յունիս 18ին մեկնելու պատրաստ ըլլալու խոտորումով:

Դեռ այդ օրուան հասնելու համար 48 ժամ ունէինք, ժամանակ անցընելու համար սկսանք էէկիկ մէկիկ գործիքնիս ու ճամբորդութեան կարոսինիս ձեռքէ անցընելով լաւ մը տեղաւորել:

Գործիքներն էին. — 1. Հարիր ամառանայ ջերմաչափ մը որ մինչեւ 150 աստիճան կը ցուցնէր: Այսչափը ինծի տելորդ կամ անբաւական երեւցաւ: Աւերորդ՝ եթէ մեր իջնելիք միջավայրին բարեխառնութիւնը չափելու գործածուէր, քանի որ հոն

հասնելէն առաջ տիպի խորովէինք: Անբաւական, եթէ հալած մետաղներու կամ ջերմուկներու տաքութիւնը հասնալ ուղէինք:

2. — Ճնշեալ օդով անգայտաչափ մը, որ մէկ մթնոլորտէ վեր ճնշումները կուտար:

3. — Հակման և ջեղումի ջ կողմնացոյց:

4. — Գրոնոմէթր մը Համպուրկի միջօրեականին վրայ լարուած:

5. — Գիշերուան դիտակ մը:

6. — Ռումբորֆի երկու գործիք, որոնք ելեքտրական հոսանքի մը միջոցաւ, յատուկ լապտեր մը կը լուսաւորէ: Այս լապտերները ոչ ջուրի մէջ կը մարին և ոչ ալ օդի պակասութիւնէ:

Զէնքերն էին երկու հրացան և երկու ըմբուկէր: Զեմ գիտեր թէ զէնքերը ինչ պիտի ընէինք քանի որ երթալիք տեղերնիս ոչ վայրենի կենդանի կար ոչ ալ որսի:

Գործիքները կը բաղկանային երկու բահէ, երկու բրիչէ, մետաքսէ եղնալանէ մը, երեք երկաթապատ գաւազանէ, կապիւնէ մը, մուրճէ մը, 12 ի չափ երկաթէ գամեր ու ցիցերէ և երկայն հանգուցաւոր չուաններու քանի մը արցակէ:


Իբր ճամբու պաշար, վեց ամսուան բաւելու չափ աղած միս և պաքսիմատ ունէինք: Հօրեղբայրս կը յուսար որ ճամբան գետնափոր աղբիւրներ կը գտնենք, ուստի ջուրի համար հոգ չընէր:

Հօրեղբայրս չմոռցաւ նաեւ հետը առնել զիւրատար դեղարան մը և շատ ծխախոտ, նոյնպէս մէջքը կապեց կաշիէ գոտի մը որու կարուածքներուն մէջ շատ մը ոսկի և արծաթ գրամներ կային:

Թարգմ.

ԶԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՆՍ

(Շարունակելի)



ԽՐԱՏՆԵՐ

Անոնք որ իրենց արուեստին մէջ նշաւոր ու գերազանց ըլլալ կը փափաքին՝ պէտք է որ շարունակ առտուն, կէսօրին և իրիկունը ամէն ատեն աշխատին:

— Հոգւոյն մեծ հիւանդութիւնը՝ անգործութիւնն ու ծուլութիւնն է:



ՄԱՀ

ՏԻԿԻՆ ԵՂԻՍԱԲԵԹ ՕՐԽԱՆԱՆԻ

ՏԻՐԱՄԱՅՐ

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ՀՕՐ

Ցաւօք կ'արձանագրենք Օրմանեան Ընտանիքը սուգով համակող՝ Աղնուուհի Տիկին Եղիսարեթ Օրմանեանի մահը:

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը թանկագին մայր մը և Ազգը՝ իր էն յարգած ու սիրած Տիրամայրը կը կորսնցնեն յանձին այն բարեպաշտուհի Տիկնոջ. որ իր բարձր նկարագրով, ազնիւ դատարարականութեամբ ու տիպար տանտիկնութեամբը ազգին մէջ նշանաւոր դաւակներ հասցուցած է:

Սրբազան Պատրիարք Հայրը իր անձնատէր ասպարէզին մէջ արդէն վարժուած է զոհողութիւններու և իր կսկիծը որչափ ալ մեծ ըլլայ, գիտէ թէ աստիկա ուզողը իրեն քարոզած վարդապետն է:

Ազգն և Պաշտօնական ու Դեսպանական մարմինները Տիրամօր դադաղին առջեւ ըրին էն մեծը յարգանքներուն զոր մարդ մը իր նմանին յիշատակին համար կ'ընէ, և ասիկա կրնար մխիթարական նշոյլ մը ըլլալ իր Սրբազան Զաւին՝ եթէ արդէն անիկա իր մխիթարութիւնը իր գաւառած հաւատքին մէջ փնտռած չըլլար, յիշեցնելով իրեն թէ ինչ մօր մը դաւակ է և որու կը պարպարտի իր կեանքին բարոյական երջանկութիւնը:



ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՆԱ ԻՆՐ ՅՈՒՆՈՒԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԹԻՒՐ

Ո՛չ միայն Պոլսոյ՝ այլ եւ ամեն կողմի հայ մամուլն ու ամեն դասու Ընթերցողաց կողմանէ գնահատուած է ցարդ նմանը հազուադիւտ եւ ամենքը մէկտեղ ժամադրած ամենուս իմացական հիացման ու սրտագին երախտագիտութեան յաւտօրէն արժանի՝ Մամուրեանի մահադարձին առջինեկ Տօնախմբութիւնը կատարելու համար, իրենց սիրած ու սրուած գրիչներով անմահացնող Գեղեցիկ Դպրութեանց սիրահար ու հետաքրքիր ամեն Հայ թէ Հայուհի, պէտք է որ ունենայ հատ մը այդ թիւէն ու կարգայ զայն, պահելու համար իրբեւ զարդ իր թանգարանին մէջ. կտակելու համար իրբեւ թանկագին յիշատակ ու դանձ գեղեցիկ Հայ մշտքերու. մտաց գեղեցիկագոյնն իր գրչին տակ համաստեղող, մարմնացնող մեծանուն դրագէտին. մեծահանճար խմբագրապետին, անմահն ՄԱՄՈՒՐԵԱՆԻՆ ի պատիւ, և ի պատիւ մեր ամենուս համակրելի այն ճաշակագէտ դրագիտաց որք իրենց ու ամենուս սիրական թէ նուիրական մտածումներն ու զգացումները մարգարտաշարեր, են այդ թիւին մէջ։ Յարդ հրատարակուած գրական հատաքածներուն մէջ բնութեւագոյնն է աւ. դոր ամեն տարի պիտի բախտաւորինք տնկնայ անորմէն հատ մ'ուրելի եւ առաւելագրատիկ ճոխ ու դուռագեղ. Պատմական անունին պէս գեղեցիկ բառերովը շատ շուտ աճուպարեր է Արայ՝ Յունուարի Ար «Արեւիկեան Մամուլ» նկատմամբ Պոլսոյ մամուլէն գնահատուելու խորհրդատուր յաջողումն այսպէս ներ.

ՆԱԿԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Երգնկա. Պ. Էֆ. Ա. - Յանձ ուեցաւ. Դոր բաժանորդին 1-10 Ղըկուեցաւ։ Զատ նամակ կ'ընդունիր։

Ամասիա, Հ. Էֆ. Խ. - Դոր բաժանորդին խըրկուեցաւ 1-10։

Դօնեա-Էրէյլի, Ա. Յ. Էֆ. Օ. - 10 Թիւէն ըսկտալ զըկուեցաւ. Վեցամեան 25 դահեկան է։

Տարէնտէ, Մ. Էֆ. Թ. - Ստացանք մեծաւ շնորհակալութեամբ։ Զեր խնդրքը սիրով կատարուած է։

Կը խնդրենք մեր այն ազնիւ բաժանորդներէն, որոնք եռամսեայ արձանա-

ղրուած են, հաճին իմայ տալ մեզ թէ, թերթին առաքումը շարունակե՞նք թէ ոչ։

Կը ծանուցանենք նաեւ թէ՝ այսուհետեւ առաջին թիւէն սկսեալ վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր, այլ տարեկան։ Իսկ 10րդ թիւէն սկսեալ թէ՝ եռամսեայ և թէ վեցամսեայ բացանորդ կ'ընդունինք։


ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

21. - Ինչո՞ւ ճօճանակաւոր ժամացոյցները տաք եղանակներուն ետ կը մնան իսկ ցուրտ եղանակներուն առաջ կ'երթան իրենց սովորական ընթացքէն։

22. - Զրոյ մէջ կշռուած մարմինները ինչո՞ւ իրենց սովորական (օդի մէջի կշիռէն) ծանրութենէն Թեթեւ, պակաս կը կշռեն։ Օդ չգտնուած տեղ մը կամ տարրեր միջառայրի մը մէջ նոյն երեւոյթը յառաջ պիտի գայ։

23. - Յուրտ եղանակներուն ջրով լեցուած ամանը ինչո՞ւ կը պայծի, ինչպէս շատ անգամ կը տեսնենք մեր անոց դպրոցականներուն մէկանի շիշերուն պայծումը, երբ վարժարանը ցուրտ դարակին մէջ կամ պատուհանին առջեւ Թողած են։

(Խրկուած են ՊԱՐԶՄԷՆԻ կողմէ)



Ի Ն, Դ Ի Բ 21.

Սոյն բազմունկիւններով հուսատարակողմ եռանմը ձեւացնել։

ԼՈՒԾՈՒՄ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒ

22. - ՆԱՄԱԿ

23. - ՍՈՒ

Զոր լուծեցին - 1 Կարապետ Յ. Տիօնեան. - 2. Կարապետ Յ. Էսմէրեան, աշ. Կեղ. Վշտ. Ի. - 3. Կ. Գարոն-Վարդան, աշ. Անտառիա Դօլէժին Մարգուանի. - 4. Յարութիւն Ն. Նիկողոսեան, Աշ. Իբրանտեան վարժ. Բ. Ամասիա։

ԱՐՏՈՆԱՏԻՐ - ԽՄԱԳՐԱՊԵՏ

ԱՐՄԻՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԴԻՐՁ - ՀՐԱՏԱՐԱԿԻՁ

Ն Շ Ա Ն. Կ. ՊԵՐՊԵՐՍԱՆ



